ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

“17” 05 2021թ. N 26 - Լ

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 16-Լ ՀՐԱՄԱՆԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի մարտի 10-ի «Ջրային կոմիտեի կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 10-ի N 32-Լ հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 16-Լ հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի 23-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«23. Ջրային կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) Ոռոգման և կոլեկտորադրենաժային համակարգերի վարչություն.
2) Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վարչություն.
3) Գույքի կառավարման և ներդրումների իրականացման վարչություն

4) Մոնիթորինգի և վերլուծությունների վարչություն.

Ջրային կոմիտեի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) Ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչություն.

2) Գնումների վարչություն.

3) Քարտուղարություն.

4) Իրավաբանական բաժին.

5) Արտաքին կապերի բաժին.

6) Զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության բաժին:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

15.05.2021

X

ՎԱՉԵ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Signed by: TERTERYAN VACHE 1201620635

/ Ս.Պապիկյան
պաշտոնակատար